


613

12-65



20 JUL 2010

610.88

On-65

Գ.Ր Գ. ՌՕԼԷԴԷՐ

4211

ՕՆԱՆԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

ՆՐԱ ՊԱՏՃԱԹՆԵՐԸ, ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ,
ՈՒՆԱԶԵԼԸ, ՆԱԽԱԶԳՈՒԾՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԲԺՇԿԵԼԸ

Խրատներ ծնողների և դաստիարակների համար

Թ.Ա.ԳՄԱՆԵՑ Ա.ՐԱՅ



ԹԻՖԼԻՍ 1910

0.0
0.0

610
175-Ռ-0

Գ.Ր Գ. ՌՕԼԷԴԷՐ

613. պր.
2-64

ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՆՐԱ ՊԱՏԺԱՌՆԵՐԸ, ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ,
ԺԱՆԱԶԵԼԸ, ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԲԺԾԿԵԼԸ

22057

Խրատներ ծնողների և դաստիարակների համար



ԹԻՖԼԻՍ 1910

ԳԼՈՒԽ Ի

ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սեռական հաճոյքը առաջին անգամ ըստ մեծի մասին արտայայտուում է օնանականութեամբ: Երեխան շատ անգամ ինքնաբերաբար դիմում է օնանականութեան հէնց միայն բնածին սեռական հաճոյքի ազդեցութեան տակ: Հետևապէս հիմնական պատճառը պարունակուում է սեռական հաճոյքի մէջ: Բայց սա ախտի գլխաւոր շարժառիթներէից մէկն է, որոնց անհրաժեշտ է դասաւորել, որպէսզի կարելի լինի նրանց արտայայտութեան առաջն առնել, սովորցնել զգուշանալ նրանցից և ճանաչել նրանց, ինչպէս առիթ տուող հանգամանքներ, որ անհրաժեշտ է օնանականութեան յաջող բժշկութեան համար:

Այն պատճառները, որոնց մօտաւորապէս կարելի է վերագրել օնանականութեան սկզբնաւորութիւնը, սովորաբար երկու կարգի են բաժանուում. նրանք, որոնք արմատացած են մեր յօրինուածքի մէջ և նրանք, որոնք գտնուում են մեղանից դուրս:

1. ԱՅՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՀԷՆՑ ՄԵՐ ՄԷՁ ԵՆ
ԾԱԾԿՈՒԱԾ

Օնանականութեան բնախօսական պատճառները ամենից առաջ սրանք են.

1, խիստ կենդանի խառնուածքը (բնութիւնը), որ անհատին նախատրամադրում է դէպի արագ գրգիռ:

2, հիւանդոտ-բորբոքուած սեռական զգացում (մարդկանց մէջ՝ հակաբնական վաւաշտութիւն satiriazis, իսկ կանանց մէջ՝ վարրութիւն — нимфоманія).

3, սեռական բնական զգացմունքից խուսափում (այսպէս կոչուած homosexual — կամ նոյնասեռ զգացում).

4, չափազանց վաղ մտաւոր զարգացում, վաղաժամ մտաւոր հասունութիւն (եթէ միայն կանոնաւոր դաստիարակութեամբ նրան ուրիշ ուղղութիւն չէ տուած).

5, ֆիզիքական պակասութիւններ և հիւանդութիւններ (սրանց թուին պատկանում են շղային հիւանդութիւններ, ինչպէս օրինակ՝ թուլացկոտութիւն, ընկնաւորութիւն, ախոնդանոտութիւն. կաշուի հիւանդութիւններ, մանաւանդ նրանք, (ցանր, կարմիր որքինը, քոր, կաշուի կսկծոց, ծակծկող տենդ — крапивница, առնանդամի գլխի միզկատապ) որոնք ցան են պատճառում. կաշուի մակաբուծական հիւանդութիւններ (քոս, ճիճուներ, մանկական որովայ-

նորդ), ներքին հիւանդութիւններ (բարակացաւ, սպիտակարիւնութիւն, բորոտութիւն, փորահարինք, թուլք — геморрой, սովորական փորկապութիւններ, շաքարամիզութիւն). գլխուղեղի և մէջքուղեղի հիւանդութիւններ (յարաճուն կաթուած, մէջքուղեղային հիւծախտ). սեռական անդամների հիւանդութիւններ, բորբոքուած դրութիւն սերմնաբշտիկների, միզապարկի վզագեղձի, միզափամփուշտի և միզանցքի, սուր միզկատապ. տրիպպեր):

6, ժառանգականութիւն (ինչպէս նախատրամադրող պատճառ).

7, ծուլութիւն և պարապութիւն (մանաւանդ ֆիզիքական աշխատանքի, իսկ գուցէ և մկանների յոգնածութեան բացակայութիւն կամ աննշան լինելը).

8, կամքի թուլութիւն:

2. ՄԵՁԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՈՒԱԾ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Օնանականութեան այն պատճառները, որ գտնուում են մեզանից դուրս, շատ աւելի բազմաթիւ են ու բազմատեսակ: Անկարելի է մի առ մի թուել այդ բոլորը, որովհետև իբրև առաջին խթան դէպի սեռական գործողութիւնը մրդող յաճախ կարող են ծառայել, ինչպէս յայտնի է բժշկական փորձերից, ամենաանհաւանական և հասարակ պարագաներ:

Այն արտաքին տպաւորութիւնները, որոնք կարող են իբրև օնանականութեան պատճառ ծառայել, հետեւեալներն են.

1, ընտանեկան և դպրոցական թիւը դաստիարակութիւն.

2, դպրոցական դաստիարակութեան պատահականութիւնը (երեխաների փոխադարձ յարաբերութիւնը, ժամերով դպրոցում նստելը, երկարատև դաս պատրաստելը, նստելու եղանակը, մարմնամարզական ձողերի վրայ սողալը, յաճախակի արտաքնոց գնալը, ճաշարաններ, պարի դասեր և անառականոցներ յաճախելը).

3, պոռնկագրական պատկերներով, սիրահարական գրքոյկներով ու պիեսներով և պարերով ապականուած երևակայութիւնը.

4, անկանոն սնունդը (կերակրի մէջ չափազանց համեմները, ոգելից խմիչքի և առհասարակ ամեն տեսակ թունդ խմիչքների գործածութիւնը, ծխելը).

5, դեղերը (այսպէս կոչուած aphrodisiaca — կանտարիդին, լուսածին (Փոսֆոր), ստրիխնին, կօկաին, հնդկականեփ, ափիօն, nux vomica, հալուէ, էրգօտին, ատրօպին, blatta orientalis, մուշկ, քափուր, տէրպէնտին).

6, աննպատակայարմար (կօրսէտ, կաշուէգօտի, նեղ անդրափարտիք), անբաւարար (կիսամերկ շորեր), ախտը ծածկող (մարդկանց անդրափարտիքի զրպաններ) հագուստ.

7, մի քանի պարապմունքներ (ծի հեծնելը, հեծանիւով մանգալը, կարի մեքենայի վրայ ոտով աշխատելը, հաշուեսեղանի առաջ կանգնելը, պարերը).

8, տարուայ եղանակն ու կլիման (ազդեցութիւնը աննշան է. տաք կլիմայի տակ սեռական զգացումը անհամեմատ աւելի սաստիկ է և աւելի վաղ է զարթնում, բայց և վաղ դադարում է).

9, սեռական ժուժկալութիւնը (ստիպուած, ակամայ, օրինակ՝ բանտերում և ուղղիչ տներում, նոյնպէս և զանազան այրի կանանց և այրի մարդկանց մօտ).

10, դժբաղտ ամուսնութիւնը (փոխադարձ համակրութեան բացակայութիւն, այստեղից — հոգեկան անգօրութիւն, իսկ այնուհետև և օնանականութիւն).

11, ընտանիքը բազմացնելու երկիւղը.

12, հեշտախտական հիւանդութիւններով վարակուելու երկիւղը.

13, սեռական անգօրութիւն, մանաւանդ ջղային և հոգեկան խանգարումներից առաջացած:

ԳԼՈՒԽ 2

ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ

Դրական կերպով կարելի է ասել, որ Օնանականութեան ժամանակ աւելի կամ պակաս չափով տուժում է մեր ամբողջ յօրինուածքը: Կամաւոր սերմնահեղութիւնը իր ազդեցութիւնն է թողնում մեր բոլոր գործարանների վրայ և մեր մտաւոր ու ֆիզիքական ընդունակութիւնների վրայ:

Այն խնդիրը, թէ արդեօք Օնանականութիւնը աւելի վնասակար չէ՞ ազդում, քան բնական մերձաւորութիւնը, եթէ երկու գործողութիւններն էլ միապէս շուտ շուտ են կատարւում, պէտք է վճռուած համարել դրական մտքով հետեւեալ պատճառների հիման վրայ.

1, Երևակայութեան գործունէութիւնը, որի հետ անխղելի կերպով կապուած է ամբողջ կենտրոնական նեարդային համակարգութեան ուժեղացած աշխատանքը, շատ աւելի մեծ է Օնանականութեան, քան բնական յարակցութեան ժամանակ:

Հետեւեալ Օնանականութիւնը այս հիման

վրայ պէտք է աւելի փաստակար ազդեցութիւն ունենայ և աւելի քայքայիչ կերպով ներգործէ ամբողջ յօրինուածքի վրայ:

Միւսնոյն պատճառով Օնանականութիւնը, նոյն իսկ չափաւոր գործածուած դէպքում, արդէն կորստաբեր ազդեցութիւն պիտի անէ մտաւոր կարողութեան վրայ, պէտք է աւելի փաստակար կերպով ազդէ ուղեղի վրայ, քան մերձաւորութիւնը, թէպէտև բանը նոյն իսկ մինչև սերմնաթափութիւնն էլ չհասնի:

2, Օնանականութիւնը մերձաւորութիւնից աւելի վնասակար ազդեցութիւն է անում նաև այն պատճառով, որ նա շատ աւելի շուտ շուտ է կատարւում, քան վերջինները:

Երբ մի անգամ արդէն գոյութիւն ունի սեռական զգացումը, ամեն պայմաններն ուրեմն կան Օնանականութեան համար: Այն ժամանակ, երբ բնական յարաբերութիւններից օգտուողը, միայն որոշեալ ժամանակները կարող է բաւարարել իր սեռական հաճոյքը, Օնանականին այդպիսի հնարաւորութիւն ներկայանում է ամեն ռուպէ: Cohn-ը հաղորդում է այնպիսի դէպքեր, ուր 15—18 տարեկան աշակերտներ պարապում էին ձեռնաշարժութեամբ օրէնը 4-ից 6 անգամ: Կատարելապէս ճշմարիտ է Curschmann-ի այն նկատողութիւնը թէ՛ աչքի առաջ ունենալով, որ Օնանականը կախում չունի արտաքին պայմաններից

և սեռական հաճոյքի առաջին իսկ երևալիս կարող է առանց երկար բարակ մտածելու բաւականութիւն տալ նրան, այդ պատճառով շատ աւելի դժուար է նրա համար յետ դառնալ իր սովորութիւնից, քան թէ սեռական յարաբերութիւնները չարաչար գործ դնողին, որ դեռ պէտք է գործ ունենայ կողմնակի գործօնների հետ:

3. Օնանականութիւնը աւելի վնասակար կերպով է ազդում քան բնական մերձաւորութիւնը, որովհետև դա աւելի վաղ է սկսւում, արդէն երեխայութիւնից:

Յայտնի է, որ օնանականութիւն երբեմն նկատուում է դեռ խիստ վաղ երեխայութեան հասակում, իսկ աւելի ուշ՝ դպրոցական հասակում ինքնակամ սերմ են թափում ըստ մեծի մասին գրեթէ բոլոր երեխայք: Եւ իսկ և իսկ հէնց այս վաղ հասակում, երբ մարմինը և հոգին դեռ ևս աճման շրջանում են գտնւում, այս ախտը ամենակորստաբեր ազդեցութիւնն է անում նեարդային համակարգութեան վրայ, այն ինչ բնական մերձաւորութիւնը գրեթէ երբէք չէ նկատուում այդ ժամանակ:

Այս երկու պարագաները—խիստ վաղ և խիստ յաճախ ձեռաշարժութիւնը—ծառայում են իբրև գլխաւոր աղբիւր ծանր հետևանքների:

4. Օնանականութիւնը աւելի վնասակար ազդեցութիւն է անում, քան բնական մերձաւորութիւնը նրանով, որ վտանգում է բնաւորութիւնը:

Fürbringer-ն ասում է. «ձեռնաշարժութիւնը վտանգում է բնաւորութիւնը նրանով, որ հէնց արմատում ոչնչացնում է բնախօսական յարաբերութիւնը դէպի միւս սեռը, իսկ սրա հետ միասին ոչնչացնում է անհատական ինքնուրոյթեան և սոցիալական գոյութեան նշանաւոր ազբիւրներից մինը: Այսպիսով, սովորութեան ոյժը յաղթանակ է տանում բնաւորութեան ոյժի վերայ»: Օնանականը խոստովանում է, որնա մի տեսակ ամօթալի գործ է կատարում կամ առնուազրն մի ոչ-լաւ բան: Բայց անուամենայնիւ նա շարունակում է այդ անել: Ակներև է, որ նա անգոր է իր սովորոյթի հետ կռուել: Ուրիշ խօսքով ասած, սովորութիւնը շարունակ ուժեղանում է, իսկ կամքի ոյժը հետզհետէ թուլանում:

5. Օնանականութիւնը այն պատճառով վնասակար կերպով է ազդում քան բնական մերձաւորութիւնը, որովհետև նա միշտ առաջ է բերում, թէպէտև կարճատև, անբաւարարութեան զգացում, զգձման զգացողութիւն:

Erb-ը ենթադրում է, որ իսկ և իսկ՝ չափազանց զրգուման և բարոյական պարտաւորութեան միջի մշտական կռիւն է առանձնապէս կորստաբեր կերպով ազդում նեարդային համակարգութեան վրայ և ձեռնաշարժների մեծ մասը թուլանեարդներ է դարձնում:

Արանք յիշուի այնպիսի պարագաներ են,

որոնք ամենևին յատուկ չեն և կամ խիստ աննշան չափով են յատուկ բնական մերձաւորութիւններին»:

Griesinger-ն ասում է, թէ «Հաճոյքի դէմ կռիւր, որ յաջողել է արդէն խորը արմատներ գցել, ամօթի, զղջման և ալեկոծող գրգռմունքի միջև տեղի ունեցող տարաձայնութեան խնամքով ծածկելը, շատ ձեռնաշարժների վկայութեամբ անկասկած աւելի կարևոր հանգամանք է ներկայանում, քան խնդիրը մարդու մասին»: Հոգու լքուած վիճակը այն բանից յետոյ, երբ բարոյական պարտականութեան զգացողութիւնը յաղթուած է լինում արդէն, զղջումը, անհետեւանք կռուի գիտակցութիւնից առաջացած բարոյական ճնշուածութիւնը— ահա, իմ կարծիքով— ինքնակամ սերմ թափելու ամենավատ հետևանքները, հետևանքներ, որոնք չեն նկատուում բնական մերձաւորութիւնից յետոյ: Եւ եթէ, ինչպէս արդէն վերևն ասացի, այս հոգեկան ճնշուած գրութիւնը օնանականութեան գործողութիւնից յետոյ քիչ է տևում, այնուամենայնիւ նա միշտ տեղի է ունենում ամեն անգամ գործողութիւն կատարելուց յետոյ և հետևապէս առաջ է բերում թէկուզ կարճատև ժամանակ ամբողջ նեարդային համակարգութեան ցնցում: Իսկ ժամանակի ընթացքում այս կարճատև ներգործութիւնները բարդուում են և վերջի վերջոյ տալիս են ծանր հետևանքներ:

6. Ոյժերի ընդհանուր անկումը, որ տեղի է ունենում օնանականութիւնից յետոյ, անհամեմատ աւելի անբարեյաջող են այն յոգնածութիւնից, որ լինում է բնական մերձաւորութիւնից յետոյ:

Երկար ժամանակ և շատ են վիճել այն մասին, թէ ճշմարիտ է արդեօք, որ սերմնահոսութեան հետևող յոգնածութեան զգացումը աւելի սաստիկ է ձեռնաշարժութեան, քան սեռական յարաբերութիւնների ժամանակ: Մի քանի հեղինակներ պնդում էին, որ բնախօսական պայմաններում մերձաւորութիւնից յետոյ տեղի ունեցող յոգնածութիւնը այն սաստիճան աննշան է, որ ամենևին հաշուի էլ չպէտք է առնել նրան: Միայն Cohn-ի մօտ ես գտայ ցուցում այն մասին, թէ «բնախօսական գործողութիւնից յետոյ մեծ չափով յոգնածութիւն է երևում մարդու վրայ»: Բժշկական բազմաթիւ դիտողութիւնների հիման վրայ ես վստահանում եմ պընդել, որ սեռական յարաբերութեան կողմից բուրրովին բնական, բայց շղային, մարդիկ ոչ միայն ոչինչ ախորժելի բան չեն գտնում այդ յոգնածութեան մէջ, այլ ընդհակառակ, համարում են այն անախորժ մի դրութիւն, որ առաջ է բերում հոգեկան ճնշուածութիւն:

Սակայն, ինչ և լինի, անկասկած է մի բան. այն է՝ որ անբնական սերմնահոսութեան ժամանակ, ինչպէս որ տեղի է ունենում հիւան-

դոտ երազագիծութեան, ձեռնաշարժութեան, անգրգիւ սերմնահոսութեան ժամանակ, հիւանդների մեծ մասը ունենում են ծայրահեղ անկարողութիւն, յոգնածութիւն և թուլութիւն, որոնք առաւել ուժեղ կերպով են արտայայտուում, քան բնական մերձաւորութեան ժամանակ: Կրածնէրիցը նոյնպէս կարծում է, որ ձեռնաշարժութեան փաստակար ազդեցութիւնը նեարդային համակարգութեան վրայ անհամեմատ աւելի մեծ է, քան բնախօսական յարաբերութեան ազդեցութիւնը, որովհետև ձեռնաշարժութեան ժամանակ տեղի է ունենում «անհամաչափ ցողութիւն»: Շատ կարելի է, որ այստեղ որոշ դեր է խաղում և սերմի այդ ձևով կորուստը: Գոնէ կինը թէ սեռական յարաբերութիւնից յետոյ և թէ ծնանականութիւնից յետոյ երբէք իրան այն աստիճան թոյլ չէ զգում, ինչպէս տղամարդը:

Բոլոր վերը ասածներից պարզ երևում է, որ ծնանականութիւնը բնական սեռական գործողութիւնների հետ համեմատած շատ աւելի փաստակար է մեր յօրինուածքի համար, թէպէտև երկու դէպքումն էլ վերջնական արգասիքը միշտ միևնոյնն է—սերմի կորուստ: Այստեղից սակայն կարելի է և մի ուրիշ եզրակացութիւն հանել. այն է, որ մինչև անգամ չափաւոր ձեռնաշարժութիւնը նոյն իսկ սեռական յարաբերութեան համար հասուն անձերի վրայ էլ աւելի փաստակար կերպով պէտք է ազդէ, քան սեռական չա-

փաւոր յարաբերութիւնները: Առանձնապէս պէտք է տուժեն ձեռնաշարժների հոգեկան կարողութիւնները:

Բազմաթիւ շարժառիթներից խիստ կարևոր դեր է խաղում մեծ մասամբ մի անստանձ և անորոշելի շարժառիթ, դա, այսպէս կոչուած, նախասրամադրութիւնն է: Մենք յաճախ տեսնում ենք, որ բոլորովին առողջ, նեարդային ամուր և անարատ համակարգութեան տէր մի տղամարդ ամենակարճ ժամանակում ծնանիզմի ազդեցութեան տակ դառնում է մի անկարող ու թոյլ էակ: Նրանից մնում է նախկին ուժեղ անհատի մի ստուեր միայն: Եւ սրա հակառակ, յաճախ պատահում է տեսնել, թէ ինչպէս նիհար, թոյլ մի մարդ, չնայելով որ սաստիկ պարապել է ծնանականութեամբ, պահպանում է իւր նախկին առողջութիւնը և իր առաջուան ոյժը:

Նայելով, թէ մեր մարմնի ամեն մի գործարանը առանձին վերցրած ինչքան ընդունակ է լինում դիմադրել, ծնանականութեան հետեւանքները զանազան գործարաններում արտայայտուում են միանգամայն տարբեր կերպով: Ոմանց, և յատկապէս երեխաների մեծ մասամբ նեարդային կենտրոնական համակարգութիւնն է փաստուում: Հետևանքը լինում են՝ սաստիկ ցաւեր, ցնցումներ, թուլացկոտութիւն, և մինչև անգամ ընկնաւորութիւն: Ուրիշներին փաստուում են գլխաւորապէս փորի գործարաններ,

սիրան է թրթռում, շնչարգելութիւն է լինում և սրա նման հիւանդութիւններ: Մի քանիսներին ստամոքսաղիքային անցքն է հիւանդանում և գոյանում են լուծողութիւն, դժուարամարսութիւն, ստամոքսազում և աղիքների դում (катаръ): Ոմանց ամենից աւելի աչքերն է սկսում ցաւել, որի պատճառով գոյանում է լուսատեցութիւն, միաւորիչ թաղանթի դում, կոպերի դողդողում և այլն:

Մի խօսքով, ծնանականութիւնը իւր յաջորդող երևոյթներով ներկայանում է մի վերին աստիճանի խայտաբղէտ պատկեր, այնպիսի մի ծայրահեղ զանազանակերպութիւն, որպիսին մենք չենք պատահում գրեթէ ոչ մի հիւանդութեան ժամանակ:

1. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Մեր մարմնի բոլոր գործարանները կապկրպուած են նեարդային համակարգութեամբ իբրև մի ներդաշնակ, անքակտելի, փոխազդեցիկ ամբողջութիւն: Միմիայն շնորհիւ մեր նեարդային համակարգութեան մասնակցութեան մեր մտաւոր ընդունակութիւնները հանդէս են գալիս ամեն ուղած ըրպէին: Նեարդային համակարգութիւնից կախում ունին մեր զգացողութիւններն ու շարժողութիւնները, մեր բոլոր

մաււոր և հոգեկան գործողութիւնները: Ինչպէս կենտրոնական, այնպէս էլ շուրջը տարածուող նեարդային համակարգութիւնը, մեր բոլոր կազմուածքում վերին աստիճանի քնքոյշ, վերին աստիճանի կազմակերպուած մասն է: Ամեն մի տպաւորութիւն, որ ստացում է թէ մեր մարմնի դրսից և թէ ներսից, հաղորդւում է ուղեղին նեարդային համակարգութեան միջոցով:

Ինչ զարմանք ուրեմն, եթէ այն ախտը, որ այնպիսի ոյժով բռնում է ամբողջ նեարդային համակարգութիւնը, այն է՝ ձեռնաշարժութիւնը, չափազանց փնասակար ազդեցութիւն է ունենում նեարդային համակարգութեան վրայ:

Աչքի առաջ ունենալով այն ներքին կապը, որ գոյութիւն ունի սեռական գործարանների և կենտրոնական նեարդային համակարգութեան և յատկապէս մէջբուղեղի մէջ, բոլորովին բնական է սպասել, որ ծնանականութեան ազդեցութեան տակ, բոլոր գործարաններից առաջ պէտք է վտանգուի ամբողջ նեարդային համակարգութիւնը: Եւ յիրաւի մենք տեսնում ենք, որ նա փաստում է ամենից առաջ և ամենից աւելի խիստ, ստեղծելով մի դրութիւն, որ ժամանակակից բժշկական գիտութիւնը կնքել է «սեռական նեարդաթուլութիւն» անունով:

Սեռական նեարդաթուլութիւն ասելով հասկանում են նեարդային թուլութեան այն տեսակը, որ սեռական բնոյթ ունեցող խանգարում-

1005
29057

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ներից առաջ գալով, հանդէս է գալիս իբրև սե-
ռական գործողութիւնների խանգարում: Վերջին
տեսակ խանգարումը կարող է նեարդային թու-
լութեան միակ նշանը համարուել, բայց ըստ մե-
ծի մասին երևան է գալիս և մի ամբողջ շարք
ուրիշ հիւանդոտ նշանների:

2. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ԶԳՍՅԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Զգայութեան գործարաններից առանձնա-
պէս վնասուում է ծնանականութիւնից աչքերը,
թէպէտ և ժամանակ առ ժամանակ նկատուում է և
ականջի, հոտառութեան ու խօսակցութեան գոր-
ծարանների խանգարում:

3. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔԸ ՄՏԱԻՈՐ ԸՆԴՈՒ- ՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Որովհետև ծնանականութիւնը կարող է այդ
աստիճան վնասակար ազդեցութիւն ունենալ ամ-
բողջ նեարդային համակարգութեան վրայ, հաս-
կանալի է ուրեմն, որ ծնանականութիւնից կարող
են սաստիկ տուժել նաև կենտրոնական նեար-
դային համակարգութեան հետ կապուած բոլոր
մտաւոր ընդունակութիւնները, մարդու ամբողջ
հոգեկան կեանքը: Վերջին ժամանակներս դիտու-
ղի առաջ մի աշխարհ բացուեց, անհաւատալի
կարևորութիւն ունեցող մի աշխարհ, այն է՝ սե-

ռական հողի վրայ զարգացող հոգեկան անբնա-
կանութիւնը, ինչպէս կոչում են սեռական
պսիխօպատիան (տարօրինակութիւն, հոգեկան
հիւանդութեան մի տեսակը), որը բժիշկնե-
րին մատչելի դարձաւ շնորհիւ այնպիսի դիտող-
ների, ինչպիսին են՝ Կրաֆտ-էբինգը, Մօլլը և
ուրիշները:

Ծնանականութիւնը, եթէ քիչ թէ շատ եր-
կար է տուում, ձեռնաշարժի հոգեկան ընդունա-
կութիւններին աւելի կամ պակաս ծանր հա-
ըուած է բերում: Եւ յատկապէս ուղեղի նեարդա-
թուլութիւնը, սեռական չափազանցութիւններից
սկիզբն առնելով՝ վնասում է գլխաւորապէս ծնա-
նականի հոգեկան բարձր ընդունակութիւնները:
Մի լաւ ուշադրութիւն դարձրէք, թէ ինչ է կա-
տարւում մարդու հոգու մէջ ձեռնաշարժութեան
գործողութեան ժամանակ և անմիջապէս նրանից
յետոյ. առնանդամի լարման հետ միասին ամ-
բողջ նեարդային համակարգութիւնը շարունակ
աւելի ու աւելի է գրգռում, մինչև որ վերջա-
պէս սերմը թափելու վայրկենին գրգռմունքը
հասնում է հոգեկան և մտաւոր զմայլման ամե-
նաբարձր աստիճանի: Արեան շրջանառութիւնը
միանգամից արագանում է. ամբողջ մարմնի
մէջ զգացում է չափազանց տաքութիւն, արիւ-
նը վայրկենաբար գլուխն է թափուում այն աս-
տիճան, որ մարդ խելքն էլ է կորցնում, միտքն
էլ, աչքերը մթնում են, իսկ երբեմն բանը հաս-

նում է մինչև անգամ ցնցումների, մի խօսքով տուփական մոլեգնութեան:

Ամբողջ նեարդային համակարգութեան այսպիսի ուժգին ցնցումը պատճառում է գլխի ուղեղի չափազանց հիւժուելու դրութիւն: Ամբողջ մարմնում զգացում է թուլութիւն, յոգնածութիւն, քնեցնող մի դրութիւն: Պարզ է, որ այսպիսի գործողութիւնը չէ կարող առաջ չբերել սաստիկ ցնցումներ մեր երեակայութեան և մեր կամքի շրջանում: Եւ եթէ նման գործողութիւններ ամիսներ և տարիներ են շարունակուում օրէնը մի քանի անգամ, այն ժամանակ մեր մտածելու ընդունակութիւնը անկասկած պէտք է տուժէ աւելի կամ պակաս ուժգնութեամբ, նայելով օնանականի մտածողութեան գործարանների զիմացկունութեան:

Այս պատճառով էլ երբ մի անգամ աւելի կամ պակաս երիտասարդ մարդկանց մէջ սկիզբն է առնում մելամաղձոտ բնաւորութիւն, մանաւանդ եթէ այդ բանը ոչ մի կերպով կարելի չէ լինում բացատրել, այդ դէպքում պէտք է ենթադրել, որ օնանականութիւն է կատարում: Իայց թէ այս ախտի հետևանք կարող են լինել այնպիսի հիւանդութիւններ, ինչպէս օրինակ յարածուն կաթուածը, խելագարութիւնը, — այդ անկասկած ճիշտ է: Այս հիւանդութիւնները ոչ մի դէպքում չեն կարող հետևանք լինել օնանականութեան: Խելագարութիւնը երբէք դեռ

անմիջական հետևանք չէ եղել օնանականութեան: Curschman-ը բոլորովին իրաւացի կերպով կարծում է, որ սեռական չափազանցութիւնները ծայրայեղ դէպքում կարող են ծառայել լոկ իբրև խթան յօրինուածքի մէջ եղած նախատրամադրութեան զարգացման դէպի հոգեկան հիւանդութիւնները: Այսպիսով այստեղ էլ կարևոր դեր է խաղում հոգեկան նախատրամադրութիւնը, ժառանգական հակումը դէպի նման հիւանդութիւններ: Եւ այն ժամանակ, երբ մի օնանական չափազանց անտարբերութեամբ է վերաբերում դէպի յիշողութեան և մտաւոր ընդունակութիւնների աճող թուլութիւնը, մի ուրիշը գուցէ, այդ տեսնելով դառնում է ծայրայեղ մելամաղձիկ և ամեն սէր կորցնում է դէպի կեանքը:

Այն դէպքերում, երբ օնանականութիւնը ըստ երևոյթին ցնորմունք է պատճառել, իսկապէս նա միայն նպաստել է ուղեղի խանգարմունքների հանդէս գալուն, ցնցելով կենտրոնական նեարդային համակարգութիւնը, ստեղծելով նեարդային հիւանդութիւնների մի աշխարհ և նախատրամադրելով դէպի հոգեկան հիւանդութիւններ: Օնանականութեան պատճառած նախատրամադրութիւնը գլխաւորապէս կայանում է մէջք ուղեղի և սեռական շղախութեան մէջ, ինչպէս են օրինակ՝ դողդոջիւնը, մէջք ուղեղի գրգռմունքը, չափազանց զգայունութիւնը, շղա-

յին աստիքը (припадокъ, affectus), նեարդերի գործունէութեան խանգարմունքը, իսկ բացի դրանից—քերէլ խանգարումներ, օրինակ՝ հոգու մեղամաղձոտ դրութիւն, դիւրագրգռութիւն, իր սեպհական ոյժերի վրայ անվստահութիւն և այլն: Առաջին տեղը բռնում են, սակայն, ճնշուած դրութիւնը, վհատութիւնը, խղճահարութիւնը, որոնք չափազանց կորստաբեր ազդեցութիւն են անում կենտրոնական նեարդային համակարգութեան և մարդուս ամբողջ հոգեկան կեանքի վրայ:

Ամենաաչքի ընկնող դիտողների միաբերան վկայութեան համաձայն օնանակա-նութիւնը կարող է մեծ վնաս հասցնել մըտաւոր ընդունակութիւններին (յիշողութեան թուլանալու միջոցով), խելքին (մտածելու դժուարութեան զարգանալու միջոցով) և այլն. օնանականութիւնը կարող է առաջ բերել թեթև հոգեկան հիւանդութիւններ (ПСИХОЗЪ), ինչպէս օրինակ՝ մեղամաղձութիւն, իստէրիա, հակում դէպի միստիքականութիւն, բայց միայն շղային ժառանգականութեան գոյութիւն ունեցած դէպքում. բայց օնանականութիւնը երբէք չէ տանում դէպի ծանր հոգեկան հիւանդութիւններ, օրինակ՝ ցնորման, կաթուածի, ինքնասպանութեան և այլն: Հոգեկան հիւանդների ապաստանարանների վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ հիւանդութիւնները կապ են ունե-

ցել օնանականութեան հետ Շվեյցիայում—3,7⁰/₀ բոլոր դէպքերից, իսկ Անգլիայում—1,1⁰/₀:

Միայն կարճատև օնանականութիւնը, իբրև մի անցողական դրութիւն դէպի բնական սեռական յարաբերութիւնները, առանց որևէ ազդեցութեան է անցնում մտաւոր ընդունակութիւնների վրայ: Բայց ինչքան աւելի ուժեղ է և երկարատև օնանականութիւնը, այնքան աւելի վտանգաւոր է նա մարդու համար և նրա բարձր մտաւոր գործունէութեան:

4. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՄԱՐՍՈ-ՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՄԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օնանականութիւնը փաստակար ազդեցութիւն է ունենում և մարսողութեան գործարանների վրայ սեռական նեարդաթուլութեան միջոցով, բայց ընդհանուր առումով այս հետևանքները այնքան յաճախ չեն պատահում, ինչպէս նեարդային համակարգութեան խանգարումները: Մարսողութեան գործարանների խանգարումներից ամենից յայտնին այսպէս անուանած ջղային դժուարամարսութիւնն է, որ առանձնապէս իր վրայ է դարձրել վերջին ժամանակները նեարդային հիւանդութեանց մասնագէտների ուշադրութիւնը:

Այս տեսակ հիւանդները զանգատուում են անմիջապէս ուտելուց յետոյ տեղի ունեցող

ստամոքսի ցաւից ու ճնշման զգացումից, երբեմն նրանք զանգատուում են բղկոցից և նոյն իսկ ործալուց, մանաւանդ հոգեկան յուզումներէրից յետոյ: Սրան աւելանում է ախորժակի կորցնելը, սերմնահոսութիւնը, փառածածկ լեզուն: Աւելի ուշ ուշ նկատուում է նեարդային ստամոքսացաւ, որ երբեմն բարդուում է ործով, աղիքների որդանման շարժումներ, փորի վքնածութիւն, անկանոն, մեծ մասամբ զժուար փորագնացութիւն և այլն:

Զգուշաւոր հետազօտութիւնից երևում է, որ այս տանջանքները կախումն ունին յայտնի նեարդային և յատկապէս հոգեկան դրութիւնից, գրգռումներից, օնանական ուժգին հարուածներից: Երբեմնակի սրանց հետ լինում են ստամոքսային նեարդերի իսկական հիւանդութիւններ, ստամոքսի և աղիքների նեարդային անկանոն գործունէութիւն, բայց այնուամենայնիւ գլխաւոր տեղը բռնում են նեարդային այն հիւանդոտ ցնցումները, որ բղխում է կենտրոնական նեարդային համակարգութիւնից: Այս բանին ապացոյց է մի կողմից այն, որ այդպիսի հիւանդների մօտ միաժամանակ նկատուում են նաև սեռական շղայնութեան մի շարք ուրիշ երևոյթներ և նշաններ, ինչպիսիք են՝ գլխացաւ, գլխի ծանր դրութիւն, կենտրոնանալու անկարելիութիւն, զգացողութեան, սեռական գործողութիւնների խանգարում և այլն. իսկ միւս

կողմից այն, որ հոգեկան սաստիկ յուզմունքից յետոյ, օնանականութիւնից յետոյ տանջանքները ուժեղանում են:

5. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ԱՐԵԱՆ ՇԸՐՋԱՆԱՌՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օնանականութիւնը լուրջ ազդեցութիւն է անում արեան ԵՐՇԱՆԱՐՈՒՐԵԱՆ գործարանների վրայ: Այս դէպքումն էլ առանձնապէս մեծ դեր է կատարում սեռական նեարդաթուլութիւնը: Հասկանալու համար, թէ օնանականութիւնը ինչ ազդեցութիւն է անում սրտի գործունէութեան վրայ, բաւական է հետևել այն երևոյթներին, որոնք տեղի ունենն բնական մերձաւորութեան ժամանակ: Գրգիւր, ինչպէս մի բոց, վառուում է աւելի ու աւելի սաստիկ և սերմը թափելուց ոչ շատ առաջ, երբ գրգռմունքը իւր գագաթնակէտին է հասնում, երեսը լցւում է արիւնով, շնչառութիւնը սեղմուում է, սիրտը արագութեամբ խփում: Սրտի զարկը պարզ լսում է ինքը անհատը, սրտի զարկերի թիւը գրեթէ կրկնապատուում է: Այս չափազանց արագացած արեան շրջանառութիւնը, սրտի այս վերին աստիճանի բարձր լարումը բացատրում են մեզ մերձաւորութեան կամ զօռով սերմ թափելու ժամանակ պատահած անակնկալ մահուան դէպքերը: Այստեղ աւամայ, ինքն ըստ ինքեան հարց է առաջ

գալիս, չէ՞ կարող արդեօք չափազանց ծանա-
կանութիւնը նախատրամադրութիւն եղած դէպ-
քում, օրինակ երակապնդութիւն (артериоскле-
роз) ունեցած ժամանակ նպաստել կաթուած կամ
անօթափքանք (аневризм) գոյանալուն:

Richerad-ը, ի միջի այլոց, յիշեցնում է
մի դէպք, ուր ասորտաի աննշան անօթափքանքը
մահ է պատճառել մի մարդու՝ մի մատողահաս
օրիորդի հետ կատաղի մերձաւորութեան ժամա-
նակ:

Այսպիսով, ժամանակի ընթացքում գոյա-
նում են սրտի նեարդայնութեան զանազան հի-
ւանդութիւններ, ինչպէս օրինակ՝ սրտնեղութիւն,
սրտի-թրթռոց, արագասրտութիւն, սրտի ցաւեր,
կից սրտի թախիծի հետ, սրտի գործունէութեան
արագութիւն մանաւանդ հոգեկան յուզմունքից,
դրգուիչ խմիչքներից յետոյ և վերջապէս առանց
որեւէ պատճառի զարկի չափազանց արագութիւն,
որը ապացոյց է արդէն այսպէս կոչուած նեար-
դային սրտի...

Որ սրտի այս երևոյթները կախումն ունին
իսկ և իսկ նեարդային գօրեղ ազդեցութիւնից,
մի կողմից ապացուցւում է նրանով, որ սիրտը
քննելիս ուրիշ որևէ ախտաբանական երևոյթ
չէ նկատուում, իսկ միւս կողմից և գլխաւորա-
պէս ապացուցւում է այն ճշտուած փաստով, որ
այն բոլոր ծանախանները, որոնք տանջւում են
սրտի շղայնութիւնից, միևնոյն ժամանակ տանջ-

ւում են և շղային ուրիշ հիւանդութիւններով,
որոնք հաստատում են սեռական նեարդաթու-
լութեան գոյութիւնը:

6. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՄԿԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Այն ազդեցութիւնը, որ ծանախանութիւնը
ինքն ըստ ինքեան ունենում է մկանային հա-
մակարգութեան վրայ, սահմանափակւում է բա-
ցառապէս միմիայն ընդհանուր թուլութեամբ:
Չեւնաշարժութեան ամեն մի գործողութիւնից
յետոյ մտաւոր թուլութեան հետ միասին տեղի
է ունենում և թեթև ֆիզիքական թուլութիւն,
որը ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ծա-
նախանութեան շուտ շուտ կատարուելու դէպքում
կարող է բարդուել և դառնալ ընդհանուր թու-
լութիւն, անհաստատ քայլուածք, արագ յոգնա-
ծութիւն, շատ մանդալու ժամանակ ոտների ցաւ
և այլն: Այս պատճառով, ծանախանների այն
զանգատները, թէ բոլոր անդամների մէջ մի տե-
սակ ծանրութիւն են զգում միւս նշանների հետ
մէկտեղ, ախտորոշական կարևոր նշանակութիւն
ունին:

7. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ՄԻՉԱՍԵ-
ՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Միզային անցքերից առանձնապէս փաստուում է միզափամփուշտը: Առաջ են գալիս փամփշտի նեարդային ցաւեր (цистонервозь), այն է ցայլոսկրի ցաւեր, մանաւանդ միզելու ժամանակ կամ յետոյ: Բացի դրանից ջղայնութիւնը արտայայտուում է և շուտ շուտ միզելու ցանկութեամբ, կաթիլ կաթիլ միզելով, թէպէտ ինքը մէզը թէ գոյնով և թէ բաղադրութեամբ մնում է բոլորովին բնական:

Առանձնապէս յաճախ նկատուում է սեռական մասերի գործունէութեան խանգարում, որի ժամանակ տղամարդկանց մօտ իբրև օնանականութեան հետեանք տեղի է ունենում սերմնահոսութիւն և սեռական անզօրութիւն, իսկ կանանցը՝ հեշտոցի զրգուում և անպտղութիւն:

Տղամարդկանց սեռական անզօրութիւնը, իմպօտէնցիան, ամեն դէպքում ներկայանում է իբրև հետեանք օնանականութեան:

Իմպօտէնցիա ասելով հասկացուում է բնական յարաբերութիւն կատարելու անկարողութիւնը հակառակ սեռի հետ, այսինքն անընդունակութիւն սեռական մերձաւորութիւններին: Անզօրութեան զանազան ձևերի մէջ միայն երկուսն են համարուում վաղ օնանականութեան հետեանք. ջղային անզօրութիւնը եւ հոգեկան անզօրութիւնը:

Ջղային անզօրութիւնը—առհասարակ անզօրութեան բոլոր ձևերից ամենից կարևորն է, որովհետև բժիշկը ամենից յաճախ այդ ձևի հետ է գործ ունենում: Ներկայումս յամենայն դէպս հազուագիւտ դէպք չէ, որ նեարդաթուլութեամբ հիւանդները և մանաւանդ սեռական նեարդաթուլութեամբ տանջուողները, նեարդային ուրիշ հիւանդութիւնների շարքում, զանգատուեն անզօրութիւնից, որ յաճախ միայն ժամանակաւոր է լինում:

Նեարդային անզօրութիւնը, ձիշտ այնպէս ինչպէս և թուլութիւնը, անքնութիւնը, սրտի բարախումբը, գլխի ծանրութիւնը, հիւանդոտ սերմնահոսութիւնը, և այլն, նեարդաթուլութեան և գլխաւորապէս ի հարկէ սեռական նեարդաթուլութեան նշաններից մէկն է կազմում: Վերջնիս պատկերը վերին աստիճանի փոփոխական է. իբրև նշան այդ հիւանդութեան կարող են ծառայել կամ սերմի միաժամանակ հիւանդոտ կորուստը և ջղային անզօրութիւնը և կամ նրանցից ամեն մէկն առանձին:

Տևողութեան և չափի կողմից անզօրութեան հետեակ ձևերը կարելի է որոշել.

- 1, բացարձակ,
- 2, յարաբերական,
- 3, ժամանակաւոր:

Բացարձակ անզօրութիւն ասելով հասկացուում է վճռական անընդունակութիւնը սեռա-

կան գործողութիւն կատարելու, չնայելով երկու սեռերի կողմից ամենաբարեյաջող պայմաններին: Իսկ յարաբերական անգորութիւն տեղի է ունենում այն դէպքերում, երբ մերձաւորութեան ընդունակութիւնը կորչում է միայն որոշեալ դիպուածներում, նայելով տրամադրութեան, հոգեկան դրութեան և նման պայմաններին: Ժամանակաւոր անգորութիւն ասում են նրան, երբ վերջինս երևան է գալիս միայն հազուադիւս դէպքերում, կարճ ժամանակով, որպէսզի այնուհետև նորից փոխարինէ սեռական լիութի կարողութիւն:

Անգորութեան յիշատակած ձևերից ժամանակաւորն ու յարաբերականը մեծ մասամբ թեթև տեսակներն են անգորութեան:

Անգորութեան գլխաւոր նշան համարւում է այն, որ առնանդամը թուլանում է կամ նոյն իսկ բոլորովին չէ կանգնում, առանց որի չի կարելի մերձաւորութիւն կատարել: Ըստ մեծի մասին անգորութիւնը արտայայտւում է այնպէս, որ հէնց immissio penis in vaginam-ից առաջ անակնկալ կերպով թուլանում է առնանդամը: Նոյնը, սակայն, խիստ հազիւ կարող է պատահել penis-ը ներմուծելուց յետոյ:

Նեարդային անգորութեան ամենակարևոր և միևնոյն ժամանակ նախնական նշանը պէտք է համարել այն, որ սերմի հոսելը տեղի է ունենում արդէն մերձաւորութեան հէնց սկզբում

կամ նոյն իսկ գործողութիւնն սկսելուց առաջ: Կրաֆտ-էբինգը այս բանը համարում է սեռական նեարդաթուլութեամբ հիւանդ անձի անգորութեան «վաղորդեան շրջանը»:

Նեարդային անգորութիւն ունեցող հիւանդներից մեծ մասի մօտ յաճախ գտնում են սեռական շրջանի նեարդային խանգարումներ, ինչպիսիք են օրինակ՝ առնանդամի գլխի վերը յիշած, չափազանց զգայունութիւնը, մանաւանդ օնանականութեամբ պարապողներին, այնուհետև առնանդամի գլխի զգայունութեան կորցնելը, որ պատահում է մանաւանդ առաւել չափահաս հիւանդներին, որոնց անգորութիւնը հասակի հետ հնացած է լինում արդէն:

Հոգեկան անգորութիւնը աւելի հազիւ է պատահում իբրև հետևանք ձեռնամուրութեան, քան նեարդային անգորութիւնը. աւելի յաճախ նկատւում է այդ տարիներով գործադրուած «ընդհատուող մերձաւորութեան» ժամանակ:

8. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ ԿԵՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Վաղուց և ամենքին յայտնի է, որ բոլորովին առողջ մարդկանց մէջ առհասարակ և առանձնապէս սեռական յարաբերութեան կողմից առողջ մարդկանց մէջ մերձաւորութեան գործողութիւնը ոչ ճնշուածութիւն է առաջ բերում և ոչ ոյժերի թուլութիւն: Այնուամենայնիւ ես պէտք

է նորից պնդեմ, որ այն մարդկանց մէջ, որոնք թէպէտև սեռական յարաբերութեան կողմից բուրրովին առողջ, բայց շատ նեարդային են, մերձաւորութեան գործողութիւնը ոչ միայն հոգեկան տրամադրութիւնը չէ բարձրացնում, այլև պատճառում է աւելի կամ պակաս թուլութիւն: Այս ի հարկէ առաւելապէս նկատում է այն ժամանակ, երբ սեռական նեարդաթուլութիւնը գոյացել է օնանականութեան հողի վրայ: Այն մարդկանց մէջ, որոնք օնանականութեան պատճառած սերմնահոսութեան հիւանդութիւն ունին, մեծ մասամբ սերմնաթափութիւնից յետոյ տեղի է ունենում վերին աստիճանի մեծ յոգնածութիւն և ճնշուածութիւն: Այս նկատում է նոյնպէս բնական մերձաւորութեան ժամանակ սովորական ձեռնաշարժներին: Վերջինների վրայ գալիս է ընդհանուր յոգնածութիւն և մտաւոր թուլութիւն, որ ժամեր է տևում և այնքան աւելի խիստ կերպով է արտայայտւում, որքան արագ և սաստիկ ենթակայ անհատը դրանից ոչ շատ առաջ նուիրուած է եղել օնանականութեան:

9. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽԱՆԳԱՐՄՈՒՆՔՆԵՐԸ ՅՕՐԻՆՈՒԱԾՔԻ ՄԷՋ

Եթէ օնանականութիւնը կարող է այդ աստիճան կորստաբեր ներգործութիւն ունենալ մեր յորինուածքի առանձին գործարանների վրայ, եթէ

խիստ յաճախ օնանականութեան վատ հետևանքները տարածւում են միաժամանակ մի քանի գործարանների վրայ. պարզ է ուրեմն, որ անկարելի է եթէ նրա ազդեցութիւնը չտարածուի և ամբողջ յորինուածքի վրայ ընդհանրապէս: Եւ յիրաւի, այսպիսի ազդեցութիւն նկատում է, այն է՝ ոյժերի ընդհանուր անկում, սննդառութեան խանգարում, յոգնածութիւն, ճնշուած դրութիւն, որոնք երևում են այնքան շուտ, ինչքան որ ենթակայ անհատը սաստիկ ու տևական կերպով է անձնատուր լինում օնանականութեան: Եւ աւելի քան հաւատացած եմ, որ մեր մաշուած երիտասարդների և մասամբ մեր դեղնած օրիորդների նշանաւոր մասը իրանց թոյլ մարմնակազմով նշանաւոր չափով պարտական են օնանականութեան:

ԳԼՈՒԽ III

ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶԵԼ

Օնանականութեան նշանները, որոնցից կարելի լինէր գաղափար կազմել, թէ երբ է հիւանդը նուիրուել օնանականութեան, այժմ թէ աւելի վաղ, այնքան էլ հեշտ չէ պարզել հիւանդից, ինչպէս որ հիւանդութիւնների մեծ մասի ժամանակ լինում է: Ի նկատի ունենալով այս՝

օնանականութեան ճանաչելն էլ այնքան հեշտ չէ, ինչպէս որ կարելի էր կարծել:

Ճանաչելը շատ դժուարութիւններ է ներկայացնում բժշկի համար և նա իսկոյն վճռական կերպով չի կարող հիւանդութիւնը որոշել հաւաստիապէս: Այդ կախուած է մասամբ նրանից, որ ծնողներն ու դաստիարակները ըստ մեծի մասին նոյն իսկ աննշան հասկացողութիւն չեն ունենում իրանց սանի ախտի մասին, որովհետև վերջիններս նուիրւում են նրան ծածուկ:

Իսկ գլխաւոր դժուարութիւնը կայանում է նրանում, որ հէնց որ գործը վերաբերում է սեռական կեանքին, հիւանդները կեղծ ամօթի զգացումից զաղանապահ են դառնում: Բժշկի հարցերին հազիւ է պատահում, որ պարզ սրտով պատասխանեն:

Այս պատճառով խիստ նպատակայարմար է ուղղակի յայտնել հիւանդին, որ նա առաջ պարպել է օնանականութեամբ, որովհետև նոյն իսկ այն ամենապարզասիրտ հիւանդի հետ, որ անձամբ ծանօթ է բժշկին, հարկաւոր է խիստ զգոյշ լինել: Բացի սրանից, բժիշկը պէտք է զգոյշ լինի և ուրիշ կողմից, նրան չպէտք է շփոթէ հիւանդի հասակը, որովհետև այնպիսի հասակ չկայ, որ բոլորովին բացառութիւն լինի օնանականութեան նկատմամբ:

Սակայն գործնական բժիշկը չպէտք է իր յոռետեսութիւնը չափազանց ծայրայեղութեան

հասցնի. օնանականութիւնը ճանաչելիս նա գլխաւոր կերպով պէտք է հիմնուի դրական նշանների վրայ: Բայց որոնք են այդ նշանները:

Օնանականը ամենից առաջ ջղային է. նա գանգատւում է, որ սէր չունի գործ շինելու և անընդունակ է մտաւոր տեական լուրջ աշխատանքի, գանգատւում է յիշողութեան նկատելի թուլութեան վրայ, մատնացոյց է անում մտաւոր եռանդի բացակայութիւնը: Սրան միանում են՝ գլխի ծանրութեան զգացողութիւն և գլխի պտոյտ և սրան կից մտաւոր ցրուած դրութիւն: Այս դրական ապացոյցները մեղամաղձոտ տրամադրութեան, թուլութեան, անտարբերութեան, ամօթխածութեան հետ միասին օնանականին լայնպիսի արտայայտութիւն են տալիս, որից փորձուած բժիշկը իսկոյն կարող է հիւանդութիւնը որոշել մի հայեացքով: Զգայունութեան գործարանների կողմից նկատուում են բիբերի լայնութիւն, կոպերի դողդողոց, մինչև անգամ՝ տկարատեսութիւն, լսողութեան չափազանց զգայունութիւն, սաստիկ գլխացաւ, մտաւոր խեղճութիւն, մանաւանդ օնանականութեան գործողութիւնից յետոյ, վերջապէս նեարդային չափազանց գլուխուած դրութիւն: Ամենաթեթիւ խշոշոք կարող է հիւանդին հոգեկան խանգարմունք պատճառել: Սրտի կողմից տեղի են ունենում նեարդայնութիւն, նեարդային բաբախում և անկանոն զարկ աննշան գրգռման ժամանակ:

Մնացեալ, ըստ մեծի մասին չապացուցանող նշանները, որոնք մատնանիշ են անուամ օնանականութեան գոյութիւնը, սրանք են. անհաստատ քայլուածք, շուտ յոգնելը, ոտների ցաւ, դէմքի գունատութիւն, ծնկների սաստիկ ծակծկոց:

Հագուագիւտ բացառիկ դէպքերում սեռական գործարանները կարող են խոշորացած լինել, թէպէտև մեծութեան կողմից ոչ մի զանազանութիւն չի լինում օնանականների և ոչ-օնականների սեռական գործարանների մէջ:

Մի փոքր աւելի ախտորոշիչ նշանակութիւն ունի այսպէս կոչուած ամորձիների պարը (orchichorea), բայց այս էլ հազիւ է պատահում: Հազիւ է պատահում նաև սեռական անդամի գլխի հաստանալը: Վերջինս, ինչպէս և թլիփը աւելի յաճախ չոր է մնում, քան խոնաւ:

Մի քանի բժիշկներ օնանականութեան նըշան են համարում թոյլ և խիստ կախուած ձուպարկը, բայց սա նոյնքան քիչ նշանակութիւն ունի, ինչպէս և սեռական անդամների մասնաւոր քրտնելը: Ընդհակառակը, կանանց սեռական անցքը յաճախ զգալի կերպով լայնացած է լինում, տուփակը մեծացած և թեթև կերպով գրգռուած:

Սակայն այս բոլոր նշանները այնքան կարևոր չեն: Ախտորոշման համար աւելի կարևորը ուղեղի նեարդաթուլութիւնն է, նոյն-

պէս էլ օնանականի բարբը, վարբը և մըտաւոր հորիզոնը:

Երբ մի անգամ այս նշանները գտնուած ժամանակ հիւանդին գննելիս չի յաջողում գէթ որևէ հիւանդութիւն գտնել, որով կարելի լինէր բացատրել հիւանդի այդպիսի դրութիւնը, այն դէպքում ամբողջ շարք հաւանականութիւններ կան, որ բժիշկը գործ ունի օնանականի հետ:

Բայց ինչպէս պէտք է վերջնականապէս վերականգնել այն, ինչ որ դեռ միայն հաւանական է համարուում:

Ծնողներն ու դաստիարակները պէտք է ամենից առաջ հետևեն, բայց առանց որևէ հարցութիւնի, թէ արդեօք իրանց որդին թէ սանը չէ առանձնանում գաղտուկ տեղ, առանձնանալուց յետոյ չի նկատուում նրա վրայ սաստիկ ճնշուած դրութիւն, յոգնածութիւն, չի վիրաւորուում նա, երբ նրա հետ խօսում էք կամ ըզգուշաւոր հարցումներ անում իր ախտի մասին: Այնուհետև ծնողները պէտք է գաղտնի դիտեն տղայի ամբողջ ձերմակեղէնը, գլխաւորապէս շապիկը, վարտիքը և անկողնի սաւանը: Եթէ ծնողներին այս կամ այն կերպով կը յաջողի մանկական ձերմակեղէնի վրայ գտնել սերմի հետքեր, հարկաւոր է ուրեմն, սխալմունքից խուսափելու համար, ցոյց տալ բժշկին, որ հեշտութեամբ կորոշէ այս բծերը ուրիշ բծերից տեսքով (որովհետև նրանք գունաւորուած են լի-

նում փոքր ինչ մուգ, գորշ գոյնով) և շօշափելով (որովհետև բժաւորուած տեղը աւելի կոպիտ է թւում, քան շրջապատող հիւսուածքը): Բայց ամենաճիշտ եղանակը, որ հեռացնում է ամեն կասկած, ի հարկէ բժի մանրադիտական քննութիւնն է:

Որ հեշտոցի քննութեան ժամանակ կնոջ սեռական անցքում գանուած օտար մարմինները անվիճելի ապացոյց են ծնանականութեան, այդ բանը ոչ մի ապացոյցի կարօտ չէ:

Երբ, վերջապէս, ծնանականութեան գոյութիւնը հաստատուած է, մնում է ձեռնարկել համապատասխան բժշկութեան, որպիսի նպատակի համար անհրաժեշտ է ամենից առաջ հեռացնել ախտի յիշատակուած պատճառը:

Գ.ՈՒԻՒ IV

ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Պատճառների չափազանց բազմազանութիւնը, որոնք առաջնորդում են դէպի ձեռնաշարժութիւն, պարզ վկայում են, որ նրա բժշկութիւնն էլ պէտք է նոյնպէս սաստիկ զանազանակերպ լինի և ամենից առաջ պէտք է համապատասխան է հիւանդութեան պատճառի ամեն մի դէպքին առանձին:

Երկրորդ տեղը պէտք է բռնէ ախտանշական բժշկութիւնը, որ գործադրւում է այն ժամանակ, երբ չէ յաջողում ախտի պատճառը իմանալ: Այս բանը ըստ մեծի մասին տեղի ունի խիստ փոքր երեխաների մօտ, որոնք նուիրուելով ախտին, միմիայն բնազդով են հետևում բնական հաճոյքին:

Բայց որովհետև ծնանականութիւնը խօսքի ուղղակի առմամբ հիւանդութիւն չէ, այլ աւելի շուտ ախտաւոր մի սովորութիւն, այս կամ այն բարեյաջող պայմաններից առաջացած, ուստի և պէտք է կռուել ոչ թէ յատկապէս ինքնայատուկ բժշկութեամբ, այլ աւելի շուտ ախտը հեռացնելու եղանակով, այսինքն նախապահ պահանջով միջոցներով, կամ այսպէս կոչուած՝ առողջապահութեամբ:

Այսպէս ուրեմն առաջին տեղը բռնում է նախապահպանող բժշկութիւնը (պրոքսիպիտիս)

Pournier-ը կատարեալ իրաւունքով նկատում է, թէ ծնանականութեան բժշկութիւնը երկու մասի է բաժանուած: Մի կողմից պէտք է ամեն միջոց գործ դնել, որ ախտը չկարողանայ ներս մտնել, իսկ միւս կողմից պէտք է բժշկել այն հիւանդութիւնները, որոնք ծնանականութեան շնորհիւ ներմուծուել են մարդկային յօրինուածքի մէջ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ (ՆԱԽԱՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ)

Ամեն տեսակ բժշկութեան հիմնական կանոնն այստեղ այս է—աշխատել որ ախտը մոռտք չգործէ մարդու մէջ: Այս միջոցներին պատկանում են. խիստ հսկողութիւն այս մասին ամեն մի երեխայի վրայ, ամենաքնքոյշ հասակից սկսած: Այսպիսով միայն կարելի է իրագործել ծնանականութեան բարերար առողջապահութիւնը:

Այս նպատակի համար բժիշկները պէտք է ծնողներին և դաստիարակներին հրահանգեն, համապատասխան խորհուրդներ տան նրանց, սովորցնեն նրանց, թէ իսկապէս ինչպէս պէտք է խնամեն երեխաներին:

Եթէ ի նկատի առնենք այդ ախտի բոլոր հետեանքները հոգու, մտքի և մարմնի վրայ, եթէ յիշենք, թէ որ աստիճան լայն կերպով տարածուած է այն երիտասարդների մէջ, թէ ինչ կորստաբեր ազդեցութիւն ունի այս բոլոր ջահիլ յանցագործները կամքի ոյժի, հոգու տրամադրութեան, բարոյականութեան և բնաւորութեան վրայ, ինչպիսի անուղղելի վնաս է հասցնում ընդհանրապէս մարդկային ամբողջ յօրինուածքին—այն ժամանակ ամենքը, կարծեմ, կհամաձայնեն ինձ հետ, որ ծնանականութեան առողջապահութեան վրայ ամենամեծ ուշադրու-

թիւնը պէտք է դարձնել: Եւ այս պէտք է լինի ոչ միայն մասնաւոր մի գործ, ոչ թէ միայն ծրնողներին և շրջապատողներին պէտք է վերաբերի, այլ պէտք է լինի հասարակական, պետական մի գործ, — ժողովրդական, մասնաւոր և պետական ստորին և բարձրագոյն դպրոցների գործ:

Օնանականութեան դէմ իսկական նախապահպանող միջոցները սրանք են.

- 1, Ընտանեկան կանոնաւոր դաստիարակութիւն.
- 2, Հասարակական կանոնաւոր կրթութիւն.
- 3, Կանոնաւոր սնունդ.
- 4, Նպատակայարմար հագուստ.
- 5, Խելացի գործունէութիւն և յօրինուածքի կազմակերպում.
- 6, Հաստատուն բնաւորութիւն կրթելը:

1. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Երեխաների ֆիզիքական դաստիարակութիւնը մինչև դպրոցական հասակը պէտք է ձգտէ այն բանին, որ արգելք դրուի ծնանականութեան տարածման բաւականաչափ թթուածին մատակարարելով երեխային, կանոնաւորելով նրա շարժողութիւնները, նոյնպէս և կարգաւորելով նրա բունը:

Մսաւոր կողմից պէտք է միշտ մտաբե-

րել, որ երեխային չափազանց վաղ պատրաստելը դպրոցի համար պատճառ է լինում յաճախակի արեան պակասութեան և ջղայնութեան, որոնք ապագայում պատճառ են դառնում օնանականութեան հեշտութեամբ զարգանալուն:

Բարոյական դաստիարակութիւնը ծնողական տան մէջ պէտք է հակուի այն բանին, որ երեխային սովորցնեն գործել լաւն ու բարին և խուսափել ամեն վատ բանից ոչ թէ գովեստի կամ պարզևի արժանանալու ցանկութիւնից, այլ դրդուած ինքնայարգութեան զգացումից, իր մարդկային արժանապատուութիւնը յարգելուց:

Դպրոցական հասակի շրջանում երեխաների ֆիզիքական կրթութեան հիմնական օրէնքը պէտք է հետևեալը լինի. ոչ մի խտրութիւն չդնել տղաների և աղջիկների մէջ և առհասարակ այդ ժամանակ ուշադրութիւն չդարձնել ապագայում զարգանալիք սեռական գործունէութեան վրայ:

Աճող յօրինուածքը կարգին ամրապնդելու ամենայարմար միջոցը համարուում է մարմնամարզողութիւնը (լողը, սրախաղը, ձիարշաւը, օդի մէջ խաղերը):

Այնուհետև խիստ կարևոր հանգամանք է ներկայացնում կաշուի կանոնաւոր խնամքը, որ պիտի կայանայ լուանալու, լոգարանների և շփումների մէջ:



2. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՄԱՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ուսումնարանում ամենից շատ է տարածուած օնանականութիւնը, ուստի և առողջապահութեան գործում ուսումնարանին պէտք է շօշափելի դեր պատկանի:

Բայց ի՞նչ միջոցներ կարող են գործ դրուել ուսումնարանում օնանականութեան առողջապահութեան համար:

1, թէ դասի և թէ դասամիջոցների ժամանակ վարժապետը պէտք է հետևէ, որպէսզի աշակերտները չպարապեն օնանականութեամբ միայնակ կամ փոխադարձ կերպով:

2, վարժապետը պէտք է հասկացնէ աշակերտներին օնանականութեան բոլոր վնասակար հետևանքները, եթէ արդէն իմացել են, որ նա արդէն գոյութիւն ունի դպրոցում:

3, զրոյցների և տպուած հրահանգների միջոցով պէտք է ծնողներին հասկացնել, որ նրանց վրայ պարտականութիւն է դրուած երեխաներին պաշտպանել օնանականութեան վնասներից:

4, անհրաժեշտ է խոստանալ ամեն մէկ երեխային, թէ միանգամայն անպատիժ կմնայնա, ով ուսուցչին կամ ուսումնարանի բժշկին կը հաղորդէ դասատան մէջ կատարուող փոխադարձ օնանականութեան մասին:

5, երեխաներին ուսումնարանից տուն ուղարկելիս անհրաժեշտ է հասկացնել այն վնասները, որոնց ենթարկուած են նրանք սեռական կրքերը յագեցնելով: Նպատակայարմար է նոյնպէս բաժանել նրանց տպուած խրատներ ապագայ բարոյական կեանքին վերաբերեալ:

3. ՕՆԱՆԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՍԵՆՏԵՆՆԻ ՄԻՋՈՑՈՎ

Առողջապահութեան հիմնական պահանջը անունդի կողմից պէտք է լինի այն, որ ստամոքսը չլքցնեն երեկոյին ծանր դժուարամարս կերակուրներով: Ընթրիքը քնելուց 3—4 ժ. առաջ պէտք է լինի: Ուտելուց առաջ պէտք է ազատուել հագուստի ճնշող մասերից (գոտիններից, կօրսէտներից): Այնուհետև երեխաները երեկոյին պէտք է ինչքան կարելի է քիչ խմեն ոչ միայն չայ, այլ և ջուր, որ խուսափեն միզափամփուշտը լցնելուց: Ոգելից խմիչների գործածութիւն մանկական հասակում թոյլատրուած չպէտք է լինի, որովհետև երեխային ալըոհոլը ոչ միայն կողմնակի, այլ և ուղղակի մղում է դէպի օնանականութիւն: Ծխելը արգելուած պէտք է լինի, գէթ մինչև 17 տարեկան հասակը: Ամենաառողջարար, սեռական համակարգութիւնը չգրգռող խմիչքը երեխաների համար ամենից առաջ կաթն է, ապա ջուրը, կակաօն, շոկոլադը

և բաց չայն: Ամենաօգտակար կերակուրը համարուում է այն, որ սննդարար է, ամրապնդող, դիւրամարս, առանց համեմների (ոչ թթու և ոչ էլ խիստ աղի):

4. ՕՆԱՆԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ՀԱԳՈՒՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ

Երեխաների համար ամենանպատակայարմարը ազատ կարճ հագուստն է, մանաւանդ ծալքերով:

Տղաների համար պէտք է խուսափել սաստիկ նեղ անդրավարտիքից և աւելի լաւ է, որ նրանք գրպաններ չունենան:

Ինչ վերաբերում է աղջիկներին, տան բրժիշկը պէտք է մայրերին համոզէ, որ դպրոցական հասակի աղջիկները կօրսէտ չպիտի հագնեն:

Անկողինը պէտք է սառը լինի, կարծր և ձիւռ մազից պատրաստած ներքնակով: Այնուհետև երեխաները, ամենավաղ հասակից սկսած, պէտք է աջ կողքի վրայ քնեն, ձեռները դարձած վերմակից դուրս: Կարևոր է, որ անկողնի ու ներսի ճերմակեղէնը միշտ ցամաք և մաքուր լինի: Ննջարանի տաքութիւնը պէտք է լինի չափաւոր, ոչ շատ տաք, նոյն իսկ ձմեռ ժամանակ:

5. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆ-
ՔԻ ԽԵՂԱՅԻ ԵՂԱՆԱԿՈՎ

Անհրաժեշտ է, որ երեխաները օրէնք գոնէ երկու ժամ խաղերին նուիրուեն թարմ օգուժ: Մեծ երեխաների համար խաղերին պէտք է փոխարինեն մարմնամարզութիւնը, ձիով վազքը, հեծանիւով շրջելը, կէզլի խաղը և նման վարժու-
թիւնները, նոյնպէս և լողալը: Առողջապահու-
թեան տեսակէտից, վերջինս, այսինքն լող տալը այնքան օգտակար է համարուում, որ մինչև ան-
գամ այդ արուեստի պարտադիր ուսուցումը անհրաժեշտ է համարուում դպրոցում:

6. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ՀԱՍ-
ՏԱՏՈՒՆ ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹԵՂՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Եթէ բոլոր նախապահականող միջոցները սեռական կրքերի դէմ անգօր երևան, այդ դէպ-
քում նրան այդ բանից յետ պահել կարող է միայն հաստատուն կամքը: Այս պատճառով դաստիարակութեան հիմնական սկզբունքը պիտի լինի երեխայի մէջ զարգացնել կամքի ոյժ:

Կամքի կրթութիւնը պէտք է սկսուի ամե-
նավաղ մանկութիւնից, երբ երեխան դեռ նոր սովորում է իր ոյժերով կանգնել և վազել: Պէտք է երեխային թոյլատրել, որ ինքն իրան սովորէ նստել և մանգալ:

Այնուհետև, որովհետև կամքի ոյժի աւելի

հաստատ զարգացման կարելի է հասնել սովո-
րութեան միջոցով, ուստի և այն ամենը, ինչ բանի որ չպէտք է երեխան ընտելանայ, պէտք է նրանից հեռացնել, իսկ այն ամենը, ինչ բանի որ նա պէտք է ընտելանայ, հարկաւոր է շուտ շուտ ցոյց տալ նրան:

Վերջապէս, երեխան պէտք է միայն մի գործ անէ և մի անգամ արդէն սկսած գործը պէտք է աւարտէ: Սրանով զարգանում է ինքն իրան զսպելու յատկութիւնը, իսկ այս յատկու-
թեան մէջ, ինչպէս ասում է Ֆէյխտէրլէբանը իւր «հոգու դիէտէտիկա» գրուածքում, պարու-
նակում է ամբողջ բարոյականութիւնը:

ԳԼՈՒԽ V

ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Եթէ ախտը կարելի է եղել արդէն իմացուել, եթէ մենք ձեռքներիս անկասկած ապացոյցներ ունենք, որ այս ինչ անհատը ձեռնաշարժութիւն է կատարում, մեզ մնում է ի հարկէ բժշկու-
թեան դիմել այս խօսքի ուղիղ իմաստով: Ան-
հրաժեշտ է սակայն լաւ հետևանքներ ի հասնելու համար ամեն մի առանձին դէպքում գննել հիւանդութեան պատ-
ճառը, որովհետև առանց սրան բաւական դժ-
ուար է ամենանպատակալարմար միջոցը ընտրել:

1. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Օնանականութեան ընդհանուր բժշկութիւթիւնը, ինչպէս որ դժուար չէ հասկանալ, առաջ պէտք է ՚ի նկատի ունենայ հիւանդի հասակը: Այսպէս, օրինակ, տասներեք տարեկան կամ աւելի մեծահասակ օնանականը կարիք ունի բոլորովին ուրիշ հոգեկան և անհատական բժշկութեան, քան երիտասարդը կամ մանուկը:

Ամենից առաջ ես կխօսեմ այն հասակի մասին, որ ամենամեծ քանակութեամբ ձեռնաշարժներ է տալիս և այս պատճառով մեզ համար ամենամեծ կարևորութիւնն ունի, այսինքն պատանեկութիւնը: Իմ խորհուրդն այս է, որ հարկաւոր չէ պատանիներին այդ ախտից հեռացնել չափազանց խիստ վերաբերմունքով կամ թէ ախտի հետևանքները չափազանց մեծացնելով նրանց աչքում:

Չպէտք է մոռանալ, որ մեր ժամանակի դաստիարակութեան, կամքի ոյժի և բնաւորութեան մեր անբաւարար զարգացման ժամանակ այդ տեսակ սպառնալիքներ և նախազգուշութիւններ միայն բացառիկ դէպքերումն են ցանկալի հետևանքները տալիս: Միւս կողմից էլ այս հասակում պատանիները դեռ ևս այնքան հասունացած չեն բարոյապէս, որ հասկանան իրանց գործածի ամբողջ էութիւնը: Հարկ չկայ հետևանքները չափազանց մեծացնել, այլ պէտք է միայն համապատասխան եղանակով ցոյց տալ

ամեն մէկ անգամ ձեռնաշարժութիւնից անմիջապէս յետոյ տեղի ունեցող ֆիզիքական թուլութիւնը, նեարդային ամբողջ համակարգութեան հետզհետէ աճող թուլութիւնն ու ցնցումը և այլն: Պէտք է հոգալ հոգին կերակրել, լաւ ընկերութեան մէջ դնել, այնպէս անել, որ ամբողջ շրջապատը միմիայն լաւ ազդեցութիւն ունենայ:

Ինչ վերաբերում է աղջկանց օնանականութեան, ամեն մի մայր պէտք է իր պարտաւորութիւնը համարէ—խստիւ հետևել իր դստեր ամեն մի շարժման սեռական զարգացման այդ շրջանում: Եւ հէնց որ կասկած կը լինի օնանականութեան մասին, անհրաժեշտ է երեխայի աչքը բացանել և օգտուելով կանացի սնտփառութիւնից՝ հասկայնել այն ֆրասակար ազդեցութիւնը, որ օնանականութիւնը կարող է ունենալ գեղեցկութեան վրայ: Մայրերին մեծ մասամբ կատարեալ հաւատ են ընծայում աղջիկները: Իսկ այդպիսի դէպքում լաւ դաստիարակուած աղջիկները բացի մօրից ոչ մի ուրիշին այնպէս հաւատ չեն կարող ընծայել՝ ամօթխածութեան միանգամայն բնական զգացմունքի պատճառով: Այստեղ արդէն աւելի դժուար է բժշկի միջամտութիւնը: Այնուամենայնիւ անհրաժեշտ է կարճ և խելացի խօսքերով երեխային բացատրել, ինչ որ պէտք է նա դիտենայ սեռական յարաբերութիւնների մասին:

Օնանականութեան ընդհանուր բժշկութեան պէտք է վերաբերել ամենից առաջ ջրաբուժութիւնը: Վերջինս, իմ կարծիքով, միևնոյն նշանակութիւնն ունի, ինչ որ և հոգեկան-բարոյական բժշկութիւնը:

Այսպէս ուրեմն, եթէ արդէն հիւանդը հիւծուելու վիճակի մէջ չէ գտնուում, նրան առաջարկելու է ամեն առաւօտ սառը ջրով լուանալ ընի ամբողջ վերևի մասը և սեռական գործարանները: Ամենից լաւ է այդ բանը մեծ սպունգով կատարել: Հիւանդը պէտք է նստի աթոռի վրայ, մերկանայ մինչև սեռական մասերը և սկսէ թաց սառը սպունգով տրորել մարմնի վերին մասը վզից սկսած դէպի ներքև: Այնուհետև մարմնի միևնոյն մասը շտապ ցամքեցնում է երկար, ոչ բրդեայ վերմակով ակելի շուտ ճնշումով, քան թէ տրորելով: Սեռական և գոտկատեղի մասերը ես խորհուրդ եմ տալիս նարից ենթարկել նոյն գործողութեան, բայց կարելոյն չափ արագութեամբ:

Ջրի տաքութիւնը պէտք է ամառը ջրհորի ջրի բարեխառնութեան հաւասար լինի, իսկ ձմեռը մօտ 15—20 րէօմիւրի, նայելով հիւանդի զգայունութեան: Եթէ ծանականը խիստ ամուր կազմուածք ունի, յարմար է ոչ-սառը լուացում, իսկ սառը ջրով շփել մարմնի ամբողջ վերին կէսը: Այս շփումը հետևեալ կերպով են անում. երկու բաւական երկար ու լայն երեսաբրէշ թըր-

ջում են սառը ջրում, թեթև քամում են, մէկ սրբիչը փռում են կրծքի չորս կողմը, միւսը սեռական մասերի և գոտկատեղու չորս կողմը, և երկուսի վրայից տրորում են հիւանդին, ձեռներով հարթելով նրա մարմինը: Այդպիսի անձանց յարմար է նաև սառը ջուր ածել վրէն (ցողացրի ձևով, души):

Այս սառը լուացումների և շփումների միջոցով պակասում է սեռական անդամների զարկերակային անօթների լարուած դրութիւնը, արիւնը ներսի գործարաններից թափուում է դէպի կաշուի մակերևոյթը, և այսպիսով հեռացուում է երակային արեւականգը սեռական գործարաններում: Սրա վրայ է հիմնուած նոյնպէս սառը լուացումների ազդեցութիւնը, երբ սաստիկ լարուում է առնանդամը: Երկուսն էլ, այսինքն լուացումն ու շփումը, ամենից ակելի յաջողուում է ցողացրի միջոցով:

Քնից անմիջապէս առաջ երբէք չպէտք է անել այս բանը, որովհետև իսկոյն հետևող տաքութիւնը անկողնում ներկայանում է իբրև մի հակադիր միջոց և զբզուում է սեռական գործունէութիւնը: Նոյնպէս էլ սառը նստալողարանները 15—20° R (մի րոպէ տևողութեամբ) երբէք չպէտք է անել քնից անմիջապէս առաջ:

Սրաի հիւանդութիւնների, ոսկրացաւերի և այլն ժամանակ ջրաբուժութիւնը ի հարկէ հակառակ ազդեցութիւն ունի:

Պէտք է զգուշանալ ոտները սառը լողաբաններին: Ընդհակառակը, տաք լողաբաններ 24—26 աստիճանի սեռական մասերի հետագայ սառը լուացումներով, ամեն դէպքում մեծ օգուտ են բերում, եթէ այդ կատարուի շաբաթն երկու անգամ:

Զրոյ բոլոր բժշկութիւնը պէտք է կատարուի աստիճանաբար, հետևողական կերպով:

2. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՅՆ ՁԵՒՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ, ՈՐՈՆՔ ՀԻՄՆՈՒԱԾ ԵՆ ՖԻԶԻՔԱԿԱՆ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

ա) Թուլացկոտութեան, ընկնաւորութեան և ախոնդանոտութեան դէպքերում տեղի ունեցած օնանականութիւնը բժշկելու համար անհրաժեշտ է կռուել հիմնական հիւանդութեան դէմ, որի ժամանակ ամենից իսկական բժշկութիւնը ներկայանում է հոգեկանը, մանաւանդ թուլացկոտութեան ժամանակ: Միմիայն այս բժշկութիւնը պէտք է տանել բաւական եռանդով: Այս հանգամանքում յաջողութիւն կարելի է սպասել նաև ներշնչումից (ГИПНОЗЪ):

Ընկնաւորութեան դէպքում օնանականութեան բժշկութիւնը ճիշտ նոյն է, ինչ որ ընկնաւորութեան բժշկութիւնը:

բ) Կաշուի հիւանդութիւնները վրայ հիմնուած օնանականութեան դէպքում բժշկի համար իսկապէս ամենաբարեբար

ախտաբուժական ասպարէզ է ներկայանում: Որովհետև օնանականութեան ելակէտն այստեղ ներկայանում է կսկծոցը, որև պէտք է հեռացնել:

Ճիշտ միևնոյն ձևով և օնանականութիւն պատճառող ներքին հիւանդութիւնները ժամանակ (թորախտ, շաքարախտ) կսկծոցը հեռացնելը բժշկութեան գլխաւոր խնդիրներէից մինն է կազմում:

3. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՅՆ ՁԵՒՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ԶԱՐԳԱՆՈՒՄ Է ՓԶԱՑԱԾ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՃՈՅՔԻ ՎՐԱՅ

Այս բժշկութիւնը ամենից առաջ հոգեբուժութեան (психиатрия) գործն է: Հոգեկան բժշկութիւնը լաւ հետևանքներ է տալիս, այնպէս որ մենք այժմ ամենայն իրաւամբ անբուժելի չպէտք է համարենք օնանականութեան այն բոլոր տեսակները, որոնք զարգացել են սեռական փչացած ցանկական հողի վրայ: Նոյնասեռին ցանկանալը—հոգեկան կիսահիւանդ դրութիւն է, որ կարող է առաջ գալ միայն հոգեկան գործողութիւններով:

Անհատական նախատրամադրութիւնը անհրաժեշտ է բժշկել կեանքի առողջապահապահեցողական եղանակով: Հիւանդներին շրջապատող անախորժութիւնը պէտք է ըստ կարելոյն հեռացնել, այնուհետև պէտք է աշխատել անզգայու-

թիւն առաջ բերել զէպի արական սեռը և հակում զէպի իրականը: Այն հիւանդներին, որոնք ձգտում ունին զէպի նոյնանուն սեռը, պէտք է աշխատել ազատել փշացած սեռական հակումից կամքի ոյժը կազմակերպելով, պէտք է հեռացնել ամեն տեսակ կարելիութիւն զէպի անբնական սեռական յարաբերութիւնները կամ զէպի օնանականութիւն:

4. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ՆԵՐՇՆՁՈՒՄՈՎ.

Հոգեկան բժշկութիւնը մեծ մասամբ տալիս է գերազանց հետեանքներ: Schrenk Notzing-ի ասելով «հոգեկան ազդեցութիւնը ներշնչման միջոցով պէտք է ապագայում խիստ կարևոր դեր խաղայ օնանականութեան բժշկութեան մէջ»:

Օնանականների վրայ հոգեպէս ազդելու համար անհրաժեշտ են.

1. Բժշկի խելացի խորհուրդն երն ու հրահանգները.

2. Մտողների (կամ նրանց փոխարինողների) օժանդակութիւնը:

Իրիքնգր կարծում է, որ հոգեկան բժշկութեան համար ամենից աւելի կարևոր է հիւանդի վստահութիւնը զէպի ծնողները:

5. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՂԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Միւս բոլոր տեսակ բժշկութիւնների մէջ յոյս ու ապաւէնը համարւում են դեղային միջոցները, չխօսելով արդէն այն մասին, որ մի շարք օնանականներ գրեթէ միշտ խնդրում են բժշկին՝ դեղ նշանակել իրանց, որով կարողանան հանգստացնել սեռական գրգռմունքները: Վերջապէս, աւելի պակաս զարգացած մարդկանց վրայ բժշկի դեղատոմսը և հոգեկան ազդեցութիւն է ունենում և նշանաւոր կերպով հանգստացնում է նրանց: Եւ ահա այս հոգեկան ազդեցութեան համար բժիշկը պէտք է միշտ հիւանդի ձեռքը դեղատոմս տայ, գործ դնելով միևնոյն ժամանակ բժշկութեան և միւս բոլոր նպատակայարմար ձևերը:

Բայց ի՞նչ միջոց կարող է ամենից աւելի նպատակայարմարը լինել՝ սեռական գրգռն հանգստացնող մի շարք միջոցների շարքում:

Դժուար թէ հարկաւոր լինի ասել, որ այստեղ էլ գովաբանուած դեղանիւթերի թիւը շատ մեծ է և նրանց մի առ մի թուելը կատարելապէս աննպատակ: Այս պատճառով էլ մենք կանգ ենք առնում ամենաէականների վրայ, որոնք հետեալներն են. ժահին (բրօմ), կօկաին, մօրֆի, զառիկ (МЫШЯКЪ), լուպուլին և մի շարք սաքութիւն իջեցնող դեղեր:

Ի՞նչպիսի միջոցներ պէտք է առաջարկէ բժիշկը:

Ամենից առաջ բռնիր: Նա ամենից արտր-
թելի համ ունի և ամենից հաստատ հանգստաց-
նող ազդեցութիւնն է անուամ սեռական համա-
կարգութեան վրայ:

Ես բրօմը տալիս եմ խշշական ժահնային
աղի ձևով, երեկոյեան քնելուց առաջ, իսկ սաս-
տիկ գրգռուելու դէպքում և ցերեկը: Լուծուածքը
պատրաստուում է այսպէս.

Փահնային կալի (бромистаго калия) 1, 2 գրամմ
Փահնային նատր (" натрія) 1, 2 »
Փահնային աւշակ (" аммонія) 0, 6 »
Չուր 1 բաժակ

Երբեմն կարելի է այս լուծուածքին աւե-
լացնել նաև 0,70 գրամմ երկաթ:

Օնանականների խիստ ծայրայեղ սեռական
գրգռման ժամանակ ես բրօմը խառնում եմ
լուպուլինի հետ հետևեալ կերպով.

Հմուլի գեղձեր (железокъ хмеля) 10 գրամմ
Փահնային կալի (бромист. калия) 20 »

Սպիտակ շաքար ըստ ցանկութեան.

Այս բոլորն զգուշութեամբ պէտք է խառ-
նել և փոշի շինել: Ընդունել օրը 2—3 անգամ
մի մի թէյի գդալ և վրէն Չուր խմել (Չրի մէջ
լուծել չի կարելի, որովհետև լուպուլինը Չրում
չի լուծուում):

Այն հիւանդներին, որոնց բրօմի ազդեցու-
թիւնից պզուկներ է դուրս գալիս կամ բրօնիդ-
մի ուրիշ նշաններ, կարելի է փոխէփոխ տալ

այս դեղերից ամեն մէկը առանձին: Լուպուլի-
նը, որի նշանակութիւնը այնքան ջանացին ոչըն-
չացնել, այսպիսի դէպքերում առանց ազդեցու-
թեան չէ լինում:

Reti, Fürbringer և ուրիշ հեղինակները մեծ
մասը նոյնպէս բրօմ են խորհուրդ տալիս,
ինչպէս ամենալաւ միջոց: Fürbringer-ի ասելով
գեղեցիկ ազդեցութիւնն է ունենում և մօրֆին
զառիկի հետ միացած, բայց սաստիկ թունաւոր
լինելու պատճառով նա արգելում է երկար ժա-
մանակ գործածել այն, այլև ընդհանրապէս խոր-
հուրդ է տալիս դիմել նրանց օգնութեան միայն
այն ժամանակ, երբ բրօմն ու լուպուլինը առան-
ձին յամառ դէպքերում ոչինչ ազդեցութիւն չեն
անում:

6. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ԳՈՐԾԻՔ- ՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Գործիքներով բժշկութիւնը աւելի քիչ է
յայտնի և քիչ տարածուած: Երբեմն միայն այն-
պիսի դէպքեր են պատահում, երբ օնանական-
ները, որ շարժուած իրանց բարի կամքով և
մարմնով մեղկ լինելով, դիմում են մեքենական
յարմարութեան, որը անկարելի է դարձնում
ձեռքերով շփել սեռական գործարանները: Այս-
պիսի մեքենական յարմարութիւններ ամենից
աւելի տարածուած են Ֆրանսիայում: Հետա-
գայում ես կհետևեմ պրօֆ. Ֆուրնիէի կարծիքին:

Այսպիսի գործիքներից ամենայայանին պը-
ղնձից կամ թիթեղից շինած մետաղէ թերթն
է, որ զանազան հասակների և սեռերի համար
զանազան է լինում. նա դրւում է սեռական գոր-
ծարանների վրայ և կաշուէ երիզի օգնութեամբ
ազդրի չորս կողմից ամրացնում են այնպէս,
որ մատները չկարողանան հասնել սեռական մա-
տերին: Պէտք է կարծել, որ դա նման է այն
վահանիկներին, որ հին ժամանակ հսկաները
հագնում էին մէջքին, որպէսզի արգելք դնեն
գիշերային գիճութեան:

Օնանականութիւնը արգելող ամենից աւե-
լի սրամիտ գործիք պէտք է համարել, սակայն,
Jalande Lafond-ի գիւտը, որ նկարագրուած է
նրա «Considerations sur les hernies abdomi-
nales Paris 1822, Tome 1 p. 443.

Քր բարդ գործիքը Lafond-ը անուանեց «cein-
ture contre l'onanisme» (գօտի օնանականու-
թեան դէմ): Այս գործիքը բամբակէ մի կա-
պիչ կամ կօրսէտ է, որ ձգւում է ետևը, պահ-
պանուում է երիզներով և ներքևից բոլորովին
փակուած է, լող տալու վարտիկի նման, այն-
պէս որ կապիչը չի կարող սլալ ոչ վերև և ոչ
ներքև: Առջևից կապիչը բաղկացած է ուտինէ
շերտից, այնպէս որ նա զփուլարացնում է մարմնի
այս կամ շարժողութիւնները: Ներսի ծայրին,
սեռական գործարանների մօտ, գտնուում է մի
մետաղեայ վահան, պատրաստուած զանազան

մետաղներից և յարմարացրած սեռական գործա-
րանների ձևին. հետևապէս աղջկանց համար նա
լինում է երկայնաձև եռանկիւնի, իսկ տղաների
համար—յարմար՝ մէջը տեղաւորելու սեռական
անդամն ու ամորձիները: Որոշեալ տեղում անցք
է լինում միզելու համար:

Մետաղի երեսին ծակեր կան օդ անցկաց-
նելու համար, որ անհրաժեշտ է կաշուի կանո-
նաւոր գործունէութեան համար: Կապիչը պատ-
րաստուում է չափսի համեմատ, այնպէս որ չէ
ճնշում սեռական անդամները և չէ զփուլարաց-
նում ոչ շարժողութիւնները և ոչ գործողութիւն-
ները: Այս կապիչով Jalande Lafond-ը բազմաթիւ
զիպուածներում շատ լաւ հետևանքների հասաւ:

Ուրիշները, ինչպէս Cloguet-ը, երկաթէ թելի
ցանցեր շինեցին, որոնք ծածկում են սեռական
մասերը և հնարաւորութիւն չեն տալիս մատ-
ները կոխել այնտեղ:

Furbringer-ը խորհուրդ է տալիս սեռական
մասերին յարմարացնել վանդակի նման մի բան,
փակելու փականքով, որի բանալին պիտի պա-
հուի հօր մօտ:

Պէտք է նկատել, որ գործիքները իրանց հա-
կառակ կողմն ունին, և ոչ մի բան այնպէս խո-
տորնակ չէ կարող լինել, ինչպէս օնանականու-
թեան ամեն մէկ դէպքի բժշկութիւնը այդպիսի
նախապաշտպանող գործիքներով: Այստեղ ան-
հրաժեշտ է յամենայն դէպս ուշադրութեան առ-

նել անհատական առանձնայատկութիւնները: Նկարագրուածս ստիպողական յարմարութիւնների գործադրութիւնը կարող է արդարանալ և կարելի է գործադրել միմիայն, ինչպէս օժանդակ միջոց օնանականութիւնը բժշկելու համար: Եւ ինչպէս փորձը ցոյց տուեց, նրանք աւելի յարմար են անմեղ երեխաների համար, որոնք հազիւ հասկանում են իրանց ախտաւոր գործողութիւնը և կատարելու ժամանակ բնագոյաբար հետևում են իրանց անգիտակցական հաճոյքին, հազուադիւրս դէպքերում այդ գործիքները յարմար են մեծ տղաներին և չափահասներին, և յատկապէս հոգեկան-հիւանդ օնանականներին:

7. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ, ԻՆՉՊէՍ ԲԺՇԿՈՂ ՄԻՉՈՑ
ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ջոյանութեան բժիշկ Schrenck-Notzing այսպիսի կարծիք ունի — «օնանականութիւնից բժշկուելու ամենալաւ միջոցը համարուում է կանոնաւոր մերձաւորութիւնը» և իրօք բժիշկներին մեծ մասը այդպիսի դէպքում խորհուրդ են տալիս ամուսնացած հիւանդներին կանոնաւոր յարաբերութիւն ունենալ կնոջ հետ, իսկ ամուրիներին — անմիջապէս պսակուել: Պէտք է սակայն ինկատի ունենալ, որ ամուսնացածներէց նրանք, որոնք օնանականութեամբ են պարապում, բաւարար չափով և նոյն իսկ շատ աւելի չափազանցութեամբ միաժամանակ լրացնում են նրանք և իրանց ամուսնական պարտաւորութիւնները:

Չափազանց յաճախ մերձաւորութեամբ և միաժամանակ օնանականութեամբ նրանք շատ անգամ հիասթափութեան են հանդիպում և սեռական անզօրութիւն են ստանում, որ բժշկի խորհուրդը կատարելով, այն է կնոջ հետ կանոնաւոր յարաբերութիւն պահպանելով՝ կարող է միայն սաստկանալ: Հետևապէս ամուսնացած հիւանդին երբէք չպէտք է խորհուրդ տալ ամուսնական յարաբերութիւններ ունենալ: Այսպիսի դէպքերում բժիշկը աւելի շուտ հոգեպէս պէտք է ներգործէ հիւանդի ինքնակրթութեան վրայ: Նա պէտք է պարզ հասկացնէ նրան, թէ ինչ անարդարութիւն է գործում նա օրէցօր թէ դէպի ինքը և թէ դէպի իր ընտանիքը. նա պէտք է պայծառ գոյնով ներկայացնէ նրան նրա բարոյական պակասութիւնը և սրա սպառնացող հետևանքները: Ճիշտ նոյն կերպով պախարակելի է խորհուրդ տալ հասակաւոր ամուրի ձեռնաշարժներին անմիջապէս պսակուել, որովհետև բացի նրանից, որ սօցիալական և ուրիշ պայմաններ ամբողջ շարք դժուարութիւններ են ներկայացնում այս դէպքում, բայց ախր օնանականութեամբ պարապողները միաժամանակ օգտուում են և ամուսնութիւնից դուրս մերձաւորութիւններով: Այս բանը մանաւանդ տեղի ունի քաղաքներում, ուր անառակութիւնը կատարեալ հնարաւորութիւն է տալիս այդ բանին:

Իմ հայեացքով, բժիշկը պարտաւոր է այս

ամենը լաւ կշռել, երբ նա խորհուրդ է տալիս պսակուել, իբրև օնանականութիւնը բժշկելու միջոց, որովհետև նման խորհուրդով նա կարող է անվերջ չարիք հասցնել շատ ընտանիքներին: Ինչպէս կեանք մէջ, այնպէս էլ պսակուելու ժամանակ պէտք է օգնութեան հրաւիրել խոհականութիւնը: Եւ պէտք է յիշել, որ իսկ և իսկ ամուսնութիւնը պէտք է ներկայացնէ զըլխաւոր միջոցը մարդկային ցեղի ազնուացման համար և որ այս նպատակին նա հասնում է միայն այն ժամանակ, երբ այդ դաշը կնքելիս ուշադրութիւն են դարձնում Ֆիզիքական և հոգեկան կողմին, նոյնպէս էլ ժառանգականութեան և բնական ընտրողականութեան որոշեալ օրէնքներին:

8. ԱՄՈՒՄԸՆՈՒԹԻՒՆԻՑ ԴՈՒՐՄ ՄԵՐՁԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ
ԻՆՉՊԷՍ ՄԻՋՈՑ ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԲԺՇԿԵԼՈՒ

Սեռական հիւանդութիւնների համարեա միակ աղբիւրը ամուսնութիւնից դուրս սեռական յարաբերութիւններն են:

Ամեն մէկը, որ օգտուում է արտաքոյ ամուսնութեան յարաբերութիւններով, ամենամեծ հաւանականութեամբ կարող է սեռական հիւանդութիւններ ստանալ, միգկատապ լինի այն, սիֆիլիս թէ փափուկ շանկը:

«Ով մի անգամ վճռում է մերձանալ անա-

ռակին, նա միշտ գիտէ, որ միզկատապ (տրիպէր) կը ստանայ (և սիֆիլիս)», ասում է Bröx-ը: Ասացէք ուրեմն, միթէ օնանականը այս վտանգի պէտք է ենթարկուի բժշկի խորհրդով:

Ես այստեղ չեմ սկսի վճռել այն խնդիրը, թէ երկու չարիքից որն է մեծը—վաւաշտո հիւանդութիւնը թէ օնանականութիւնը: Ես կարծում եմ, որ ըստ մեծի մասին սեռական հիւանդութիւնը աւելի մեծ չարիք է:

Բայց եթէ նոյն իսկ թոյլ տանք, որ ամուսնութիւնից դուրս մերձաւորութիւններից վարակուելու վտանգը խիստ չնչին է կամ նոյն իսկ ամենին գոյութիւն չունի, բայց չէ որ այդ յարաբերութիւնները, ինչպէս և ամուսնական մերձաւորութիւնները, ամենևին չեն ծառայում օնանականի համար իբրև մի ճշմարիտ միջոց ախտի դէմ: Չաւփահաս ձեռնաշարժների մեծ մասը անկասկած օնանականութեան հետ միասին օգտուում են և ամուսնութիւնից դուրս մերձաւորութիւններով: Բայց եթէ մինչև իսկ այս էլ տեղի չունենար, այնուամենայնիւ ամեն մէկը պարտաւոր է մըտածել ամուսնութիւնից դուրս յարաբերութիւններ թոյլատրելու տուած խորհրդի բարոյական կողմի մասին:

Դեռահաս, դեռ չփացած ձեռնաշարժը, եթէ մէկ կողմը թողնենք ի հարկէ նրա օնանականութեան կիրքը, այդպիսի խորհրդի հետևելով,

անխուսափելի կերպով ընկնելու է այն տղմի մէջ, որի հետ կապուած են նոյնանման ընկած արարածների հետ յարաբերութիւնները: Ամեն մէկ բժիշկ կարող է հաստատել, որ ինչքան ձեռնաշարժը աւելի կապ է պահպանում անառակների հետ, այնքան դժուար է յետ դարձնել նրան կեանքի բարոյական ճանապարհի վրայ:

Բաւական է, որ ձեռնաշարժը մի անգամ ընկղմուելի այդ տղմի գբի մէջ, և նա այլ ևս չի կարող ազատուել այնտեղից, նոյն իսկ հէնց իր թոյլ բնաւորութեան շնորհիւ:

Աշխատել ձեռնաշարժին ազատել այդ ատից, խորհուրդ տալով նրան ամուսնութիւնից դուրս մերձաւորութիւնների դիմել, — այս բանը մենք համարում ենք դատապարտելի թոյլտուութիւն, երկսայրի մի գործ, որի վրայ պէտք է աւելի լուրջ կերպով մտածել, քան այդ անում են մի քանի բժիշկներ:



«Ազգային գրադարան»



NL0271103

2140